# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ
## Տ. ԱՎԵՏԻՍ ԱԲԵՂԱ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Ավետիս աբեղա Սահակյանը՝ հոգևոր ծառայությունն ինքնակամորեն լքելու կանոնազանց ընթացքի համար։

Կարգալույծ հռչակված աբեղան այսուհետ կդասվի աշխարհականների շարքը՝ Արտակ Սահակյան ավազանի անունով։

## ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ
## Տ. ՌՈՒԲԵՆ ՔԱՀԱՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Գուգարաց թեմի հոգևոր սպասավոր Տ. Ռուբեն քահանա Եղիազարյանը։

Հայրապետական վճռի կայացման համար հիմք են ծառայել Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի միջնորդագիրը Տ. Ռուբեն քահանա Եղիազարյանին քահանայական կարգից ազատ կացուցանելու վերաբերյալ, ինչպես նաև՝ Տ. Ռուբեն քահանա Եղիազարյանի դիմումը։

Կարգալույծ հռչակված քահանան այսուհետ կդասվի աշխարհականների շարքը՝ Տիգրան Եղիազարյան ավազանի անունով։